

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե


7-8-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վատասկել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Ո՞ր դարձվածքն է պատկերված նկարում:

- Ա. պատեպատ ընկնել Բ. պատը չոփ խրել
 Գ. ականջի հետևը գցել Դ. ականջին օղ անել
 Ե. պատերն էլ ականջ ունեն



2. Երամակն իջել էր, որ գետից ջուր խմի: Նժույզը շուրջը նայեց և նկատեց, որ իրենց երամակում մեկն օտար է: Ո՞րն էր դա:

- Ա. հովատակը Բ. զամբիկը Գ. աշխետը Դ. վիթը Ե. երիվարը

3. Ի՞նչ նախադասություն է գրված:

Գիւմիհիթըքըթմենայրեդաուրենայրեչկենայրմենուէ:

- Ա. Գիթըրը նկարագրող է: Բ. Գիթըրը մարդու ընկերն է: Գ. Գիթըրը մտքի բանալին է:
 Դ. Գիթըրը շատ թանկ է: Ե. Գիթըրը մարդու բարեկամն է:

4. Ո՞ր մասնագետն էր զբաղված ոչ իր մասնագիտությամբ:

- Ա. Բրուտը պայտում էր ձին:
 Բ. Խեցեգործը կավից ամաններ էր պատրաստում:
 Գ. Հյուսնը շինարարության համար ատաղձ էր պատրաստում:
 Դ. Փակնագործը մետաղյա իրեր էր նորոգում:
 Ե. Հնագետը հնություններ էր ուսումնասիրում:

5. Պատասխանի տարբերակներում բերված բառերից ո՞րը պետք է դնել մեղվի փոխարեն:

մարդատար – տարադրամ

ամրակ – կամար

կարկատան –

- Ա. անկատար Բ. կատակարար Գ. կտակարան Դ. տնկարան Ե. տնական

6. Ամբողջացնել ժողովրդական առածը. «**Գորավ խուփը, _____**»:

- Ա. պուտուկը ջարդեց Բ. ընկավ թոնիրը Գ. գտավ իր ճամփան
 Դ. մոլորվեց թուփը Ե. գտավ պուտուկը

7. Ի՞նչ բառ պետք է գրել մեղվի փոխարեն. *ահա, բիբ, գոզնոց, դորոշ, երեք,*

- Ա. զանգակ Բ. թաթար Գ. կակաչ Դ. զագրանք Ե. ծիծաղ

8. Ո՞ր ձայնավորով և տրված տառերով է հնարավոր կազմել 9-տառանի մի բառ: Տրված տառերի տեղերը պիտի չփոխվեն:

ԸԿՓՂԿԼ

- Ա. ու Բ. ե Գ. ո Դ. ի Ե. ա

9. Պարոն Երեքի տանը հյուրընկալվեցին **եռանկյունը, եռաժանին, երեքնուկը, երեսնանոցը, եռանդունը, եռյակը, եռմանը, երեսունը** և **զեռունը**: Ոմանք նրա հարազատներն էին: Իսկ ովքե՞ր էին օտար:

- Ա. երեսունը, եռյակը, եռանկյունը Բ. երեսնանոցը, երեսունը, եռանկյունը
 Գ. եռանդունը, զեռունը, եռմանը Դ. եռյակը, եռաժանին, երեսունը
 Ե. եռաժանին, երեսնանոցը, երեքնուկը

10. ՍԵՐ(2), ՀԵՐ(2), ԿԱՊ(1) բառաշարքի օգնությամբ Հայկը բառ է մտապահել: Փակագծերի թվերը ցույց են տալիս, թե այդ բառի և բառաշարքի տվյալ բառի մեջ քանի ընդհանուր տառ կա, ընդ որում՝ նույն դիրքերում: Հայկի մտապահած բառն է՝

- Ա. պաս Բ. պար Գ. կեր Դ. կար Ե. երկ

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Ո՞ր նախադասությունը գերծ չի մնացել մակաբույծ բառից:

- Ա. Արան ամեն առավոտ ոտքով քայլում է երկու կիլոմետր:
 Բ. Եթե չհարմարվեմ, անպայման կվերադառնամ:
 Գ. Զինվորները ոտքով անցան այդ քարքարոտ ճանապարհը:
 Դ. Հետդարձին հանդիպեցինք օտարազգի զբոսաշրջիկներին:
 Ե. Երկհարկանի առանձնատան վերևի հարկում ապրում էին մայր ու որդի:

12. Մեղվիկի փոխարեն ո՞ր բառը տեղադրենք, որ «հանդիպենք» ստեղծագործողի:

Բույս, արև, , աստղ, սուրբ, տերև, երգ, դեկ, ծաղիկ

- Ա. սար Բ. ծառ Գ. մեղր Դ. լուսին Ե. նուռ

13. Պատասխանի տարբերակներում տրված տառերից ո՞րը տեղադրելով մեղվիկի փոխարեն՝ հնարավոր է կարդալ 8-տառանի մի բառ (տե՛ս նկարը): Բառը կարելի է կարդալ շարժվելով միայն ձախից աջ և վերևից ներքև:

- Ա. գ Բ. ր Գ. ն Դ. թ Ե. կ

Կ	Ա		Մ	Ի
Ա	Պ	Ն	Ճ	Բ
Ն	ՈՒ	Ա	Կ	Ե
Ա	Յ	Ս	ՈՒ	Լ
Չ	Տ	Ե	Ն	Թ

14. ԻՍԿ, ԷՐ, ՍԱՌԱԾ, ԱՊՈՒՐԸ բառաշարքի բոլոր բառերով և պատասխանի տարբերակներում տրված բառերից որո՞վ են կազմվում իմաստով իրարից տարբեր առնվազն երկու նախադասություն: Բառերի տեղերը կարելի է փոխել, վերջավորությունները՝ ոչ:

- Ա. սոված Բ. անոթի Գ. մրսած Դ. կերակուր Ե. կուշտ

15. Գտի՛ր բերված տառային ծածկագրի ճիշտ լուծումը:

Ա.	3452	Բ.	4105	Գ.	4538	Դ.	1926	Ե.	3021	+	ՀԻՆԳ
	+		+		+		+		+		<u>ՀԻՆԳ</u>
	<u>3452</u>		<u>4105</u>		<u>4538</u>		<u>1926</u>		<u>3021</u>		<u>ՏԱՍԸ</u>
	6904		8210		9076		3852		6042		


16. Պատասխանի տարբերակների բառերից չորսը գրաշրջվում են (նույն տառերով կազմվում է նոր բառ): Որո՞վ նոր բառ չի ստացվում:

- Ա. գարմանք Բ. շարասյուն Գ. ատրաշեկ
- Դ. մարդուկ Ե. քննադատություն

17. Աճապարարական միևնույն հնարքից հետո *կարկին, կարկուտ, կարպետ, կացին, կամուրջ* բառերը, բացի մեկից, վերածվեցին նախադասությունների: Ո՞րը նախադասություն չդարձավ:

- Ա. կարկին Բ. կամուրջ Գ. կարպետ Դ. կացին Ե. կարկուտ

18. Բառերի ո՞ր եռյակը, եթե լրացնենք քառակուսու մեջ, քառակուսու տողերով և սյուններով՝ վերևից ներքև, ներքևից վերև, ձախից աջ, աջից ձախ, կկարդանք բառեր:



- Ա. խոփ, ոգի, փիղ Բ. գահ, երե, սուգ Գ. արտ, կետ, վկա
- Դ. գին, ինի, նիգ Ե. թիվ, մատ, ուղի

19. Պատասխանի տարբերակներում բերված պատկերներից որի՞ հատվածներում գրված բոլոր վանկերն օգտագործելով՝ հնարավոր չէ բառ ստանալ:

հան	տից
րաս	պատ

Ա.

կեր	պատ
պա	սա

Բ.

կե	պատ
րա	տից

Գ.

հան	րա
կե	պատ

Դ.

սել	տու
հա	պա

Ե.

20. 220 4091 61 401 2801 7 թվերի շարքով ծածկագրված է հետևյալ նախադասությունը.

- Ա. Ապի՛, ծարավ եմ, ջուր եմ ուզում: Բ. Մի՛ խմիր, դա հին ջուր է:
- Գ. Արի՛ տուն, մի՛ գնա, հեռու է: Դ. Մի բան եմ ուզում ասել:
- Ե. Մի տղա կա, նա սպա է:

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Ի՞նչ չէս գտնի շաբաթվա օրերի անվանումների մեջ:

- Ա. լուսանցք՝ առաստաղի մեջ Բ. այբուբենի տառանուն
- Գ. գրական ստեղծագործություն Դ. դերանուն Ե. շաղախի մեջ օգտագործվող նյութ

22. Ի՞նչ է գրված նկարելուկով:



- Ա. Կորը բարևեց վեց կենդանու:
- Բ. Կարոն վեց կենդանի իջեցրեց նավից: Գ. Կենվորը բերեց վեց կենդանու նկար:
- Դ. Կարևորը վեց կենդանի նկարելն է: Ե. Կենվորի բարձր կդառնա նկար:

23. Գարոտ բառում թաքնվել են *կար, ար, արոտ* բառերը: *Մարդ, պարտեզ, հովհար, հոտաղ, թակարդ* բառերի մեջ ևս նույն կերպ բառեր են թաքնվել: Դրանցից որի՞ մեջ են թաքնվել ամենաշատ բառերը:

- Ա. սալոր Բ. պարտեզ Գ. հովհար Դ. հոտաղ Ե. թակարդ

24. Պատասխանի տարբերակներից որո՞ւմ Գիտունիկը սխալ գտավ:

Ա. Մեծին լաղի ոտքը քարին չի դիպչի:

Բ. Քո ասածներն իմ սրտով չեն:

Գ. Գայլն ուզում էր իմանար գառների տեղը:

Դ. Լուրթ երկինքը խոստանում էր պայծառ օր:

Ե. Մեր հարևանը սիրով ընդունեց աստանդական մարդուն:

25. *Աղբյուր, կերպար, վարկատու, բուրթակ, արդյունք* բառերից չորսում որևէ տառ ն՛ սկիզբ է, և՛ վերջ: Ո՞ր բառն է գուրկ այդ հետաքրքիր հատկությունից:

- Ա. արդյունք Բ. կերպար Գ. աղբյուր Դ. բուրթակ Ե. վարկատու

26. Պատասխանի ո՞ր տարբերակում են իրար համապատասխանում հայկական առածների սկիզբն ու ավարտը:

- | | |
|--------------------------------|---------------------------------|
| 1. Ջուր կերթա, | ա. անձրևից չի վախենա: |
| 2. Գետն անցկացան, | բ. ինչքան խմես, կծարավես: |
| 3. Լավություն արա, ջուրը գցիր, | գ. ձուկը չիմանա, աստված կիմանա: |
| 4. Ջուրն ընկնողը | դ. ատվումը խեղդվեցին: |
| 5. Արծաթը (փողը) աղի ջուր է, | ե. ավագ կմնա: |

- Ա. 1-բ, 2-դ, 3-գ, 4-դ, 5-ա Բ. 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ, 5-ե Գ. 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա, 5-ե

- Դ. 1-ե, 2-դ, 3-գ, 4-բ, 5-ա Ե. 1-ե, 2-դ, 3-գ, 4-ա, 5-բ

27. *Աշնան մի օր Սրբուհին ընկերոջ հետ առվի ափին սննդի մնացորդներ էր հավաքում՝ մաքրելով շրջապատը:* Ու-ն խուսափել էր աշխատանքից ընդգծված նախադասության բառերում մերթ կերպարանափոխվելով, մերթ չքանալով: Քանի՞ տեղ նա չէր մասնակցել աշխատանքին:

- Ա. 4 տեղ Բ. 5 տեղ Գ. 6 տեղ Դ. 7 տեղ Ե. 8 տեղ

28. Բերված գույգերն ընտրված են որոշակի սկզբունքով: Նրանցից մեկն այդ սկզբունքին չի ենթարկվում: Ո՞րն է դա:

- Ա. ափսե – սեղան Բ. հայելի – լիալուսին Գ. արկղ – կղմինդր
- Դ. բարդի – դիմակ Ե. դուռ – ուռենի

29. Գյուղացին դատում, բանում էր ամբողջ օրը: *Նա վարկ էր վերցրել, որ տարեկանի արտը մշակի: Ամբողջ օրը հարում էր խոտը՝ անտեսելով հորդ անձրևը:* Քանի՞ երկերեսանի բառի դիպավ գյուղացու եղանն ընդգծված հատվածում:

- Ա. 8 Բ. 7 Գ. 6 Դ. 5 Ե. 4

30. ՓՅՈՒԲ, ԴԱ, ԲԵՆ, ԹՈ ընտանիքների անդամները հերթ էին կանգնել՝ *էր՝նավառ, էր՝նմ, քր՝ոտ, ար՝ուզար՝, գվար՝, ար՝նանալ, ար՝ուկ, էրեսար՝իչ, էր՝նեբանգ, սփր՝նել* շարքում աստղանիշերի փոխարեն իրենց տեղերը գաղտնիցում համար (ԹՈ ընտանիքի անդամներն են թ տառերը): Շարքը լրացնելուց հետո պատասխանի՞ր, թե տարբերակներում բերված որ պնդումն է ճիշտ:

- Ա. Ընտանիքներից մեկը շարքում նոր անդամ չունեցավ:
- Բ. ԴԱ և ԹՈ ընտանիքների նոր անդամների թիվը հավասար է:
- Գ. ԲԵՆ և ՓՅՈՒԲ ընտանիքների նոր անդամների թիվը հավասար է:
- Դ. ԲԵՆ ընտանիքի նոր անդամների թիվը երեք անգամ ավելի է շարքում նույն ընտանիքի մինչ այդ ունեցած անդամների թվից:
- Ե. Բոլոր տարբերակները ճիշտ են: